

ՀԱՍՑԷ

M. ARCHAM
Poste Restante
ATHENES (Grèce)

Փոսթին ծախքը խմբա-
գրութեան կը պատկանի:

ՄԻՈՒԹԻՒՆ

Ա Մ Ս Ա Թ Ե Ր Թ

ՅՈՒՅԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱԶԱՓՈՐԻ

Ա - ՏԱՐԻ

ՓԵՏՏՈՒԱՐ

1897

ԱԹԵՆՔ

ԹԻՒ 8

ՄԻՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

ԵՐ

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Մեր նախորդ խմբագրական-
նով ըսինք թէ ժողովուրդը ինչ
գեր կրնայ կատարել Միութեան
խնդրին մէջ և առ եղբակցութեան
հասանք որ եթէ յեղափոխական
կուսակցութիւններու մէջ Միութիւն
առաջ չի գայ, գանազան պատճառ-
ներով, ժողովուրդը իր բացարձակ
արհամարհանքովը պէտք է ջլատէ
ամեն կուսակցութիւնները:

Այս ըսելէ հոգը աւելցուցինք թէ
Սուրբ Դատին յաղթանակին համար
կը մնար գերազոյն փորձ մը և խոն-
տացանք երկրորդ յօգուածով մը
բացատրել թէ ո՞րն է այդ փորձը:

Այսօր կուգանք մեր խոստումը
կատարել:

* * *

Ահա՛ ինչ որ մենք կ'առաջարկենք
ժողովուրդին:

Այն օրը ուր ժողովուրդը տեսնայ
թէ եսասէր, փառասէր, քինախնդիր
նշխարութիւններով Միութեան գործը իս-
պառ անիրագործելի դարձած է, իր
բարոյական ու նիւթական օժան-
դակութիւնը դողբեցնելու է, միւս
կողմէ՝ յեղափոխական զանազան
մասնաձևեր, որոնք Միութեան
համարիտ դռնուած են, անսխալապէս
լուծուած հաշակիւն են իրենց մաս-
նաձևերը և ընդհանուր բարեփոխող
մը սկսելու են թէ խօսքով, թէ գործով
և թէ գործով ընդդէմ անոնց, որոնք
գեր յամառին իրենց անձնական շա-
հերուն, կիրքերուն և փառամոլու-
թեան համար, ինքզինքնին այսինչ

կամ այնինչ յեղափոխական կուսակ-
ցութեան անդամ ցոյց առաւ:

Մենք վստահ ենք որ ժողովուրդը
և յեղափոխականները, որոնք արդէն
զգուած են այդ պառակտումներէն և
յեղափոխութեան կուսակցական իսպա-
տառակութիւններէն, իրենց կամքը
պիտի կրնան յաղթանակել տալ և
քիչ ժամանակի մէջ ազգը ազատել
այդ շինծու, խայտառակ, անբարո-
յական յեղափոխութեան ձեռքէն որ
հայ ազգը փրկելու համար իբր թէ
մէջտեղ ելլելէ հոգը, այսօր հայ
ազգին գլխուն ժանտախտ մը դար-
ձած է:

Անգամ մը որ հրապարակը մաք-
րուի ընդդիմամարտ «կենդրոն»ներէ,
«պիւնոս»ներէ, «կոմիթէ»ներէ, «մատ-
նաձիւղ»ներէ, այն ատեն ժողովուր-
դը պէտք է իր գլխին ճարը տեսնայ:
Թո՛ղ ամէն անհատ, իրեն համար
կազմէ յեղափոխական կուսակցու-
թիւն մը, ինք իրեն համար թող ըլ-
լայ «կենդրոն» և «մասնաձիւղ» և
պատրաստ դառնուի առաջին նշանին
օտք ելլելու:

Պէտք է անկեղծօրէն խոստովա-
նինք որ մինչև այսօր մեր ըրածնե-
րը, թերութեան գործողութիւն կամ
ցոյց, դառաղութիւններ էին և ո՛չ
թէ յեղափոխութիւն: Զէյթունէն դատ
որ և է յեղափոխական կամ ապրա-
տամբական շարժում չէ եղած մինչև
այսօր և հիմայ գիտենք թէ Զէյթու-
նի շարժումը, որչա՛փ քիչ բան կը
պարտէր մեր յեղափոխական ձկովի-
թէններուն:

Կը կրկնենք ուրեմն մեր խօսքը:
Եթէ Միութիւն չզոյանայ բոլոր յե-
ղափոխական և հայրենասիրական կու-
սակցութիւններու միջև և չկազմուի
ընդհանուր և համերաշխ ուժ մը

Այդի մը պապազայ
կեանքի բարեփոխան
առաջին պնդմանն է
Միութիւնը:

«Միութիւն»ը ա-
ռիւթեղ չի կը զըր-
կուի:

ճշմարիտ ապտտամբական շարժում
մը առաջ բերելու կարող շարժում
մը որպէս ըրած են Սերպիացիները,
Յոյները և Պուլիարները, այն ատեն
ժողովուրդը թո՛ղ բոլորովին լքանէ
այդ յեղափոխական քովիթէները «Հըն-
չակ», «Դրօշակ» նազարբէկ և ընկե-
րութիւնը և թո՛ղ ամեն մարդ ան-
հատապէս պատրաստուի որպէսզի
օր մը, արժանաւոր գործիչներու
ձեռքին տակ, Ազատութիւնը ձեռք
բերէ:

Ուրիշ պիտի գան այդ առաջ-
նորդները, պիտի հարցնեն հիմա մեր
ընթերցողները: Այս հարցումին պա-
տասխանելէ առաջ, ուրիշ յօգուա-
ծով մը պիտի բացատրենք թէ ինչ
ըսելէ կ'ուզենք «թո՛ղ ամեն մարդ
անհատապէս պատրաստուի» ըսելով:

ԴԱՃՆԱԿՑԱԿԱՆԻ ՄԸ ԿԱՐՄՈՒԹԸ
«ՄԻՈՒԹԵԱՆ» ՄՍՍԻՆ

Տղայամտութիւն է կարծել որ
«Դաճակցականները» դէմ են «Մի-
ութեան» խնդրին: Ես հրճուում եմ,
որ այդ կուսակցութիւնը, ինչպէս
նաև ուրիշ կուսակցութիւններ՝ ան-
կեղծ կերպով ձգտում են սուլթանա-
կան բռնապետութիւնը տապալել և
ազատել տառապեալ Հայրենիքի հա-
զար անգամ տառապող ժողովուրդների
վերջին մնացորդները: Ամեն կուսակ-
ցութիւն, որ անկեղծ կերպով
կը ձգտի միացած բռնապետու-
թեան տապալման, կ'աշխատի ան-
չաչտ նաև զօրացնել իւր կու-
սակցութիւնը, աճիլ, ուռճանալ որ
աւելի հեղափոխամբ տապալեն հա-
կառակորդին: Ահա այս տեսակետով
Դաճակցականները չեն կարող չիմա-
նալ Միութեան:

Բայց նախքան միանալը պէտք է լաւ կշռել, լաւ խորհիլ ամեն մի քայլը, որ անելու ենք դէպի այդ կէտ նպատակը:

Միանա՞նք, խիստ լաւ: Բայց ի՞նչպէս միանան ջուրն ու կրակը... Հին Հնչակեան կուսակցութեան հետ չէինք կարող միանալ, որովհետեւ կային սկզբունքի խիստ որոշ տարբերութիւններ: Նազարբէկի ուսմանը հետեւեալ թարգմանած ծրագիրը սոցիալ-լիստ-դիմոկրատական էր, իսկ մենք այսօր ոչ մի հարց անգամ չենք ուզեր ծագեցնել այդ առթիւ: Անոր ծրագիրը կը վերաբերէր Տաճկա, Ռուսա և Պարսկա-Հայաստաններին, իսկ մերը միայն և միայն Տաճկա-Հայաստանին: Նա կ'ուզէր Հայկական ազգային անկախութիւն, իսկ մենք բոլոր տեղական ժողովուրդները դաշնակցական ազատութիւն: Նրա կուսակցութեան ներքին կազմը ձեւոված էր Արքայապետ Գ. Բաղրի բռնապետական կեդրոնացման: Իսկ մերը կատարեալ ապակեդրոնացում էր: Մեր մէջ միութիւն անհնար էր: Իրենց խնկարկած Նոր-Հնչակեանները կամ Արքիարականները մերժեցին Նազարբէկի սոցիալ-դիմոկրատիզմը, և այլ սկզբունքներ... նրանք ջնջեցին մեր և Նոր-Հնչակեանութեան մէջ եղած մի քանի խոշոր խոչնդոտները: Շատ բարի նրանք ընդունեցին ուրեմն մեր ծրագրի մի քանի կէտերը: Մնաց մի կէտ միայն՝ կազմակերպութեան սկզբունքը, կեդրոնացումը թէ ապակեդրոնացում: Իսկ այստեղ նրանք մասամբ լռեցին, մասամբ ալ երկդիմի, անիմաստ բառեր բաց թողին: «Մենք կ'ընդունինք որ ոչ ոք չ'ափի կեդրոնացում»: Որ ոչ չ'ափի... Նազարբէկի համար այդ որոշ չափը նրա և սովորութիւնն էր, իր կամքը, իսկ ձեզ համար ո՞րն է այդ չափը:

1890-92 երեք տարիների մէջ գոյութիւն ունեցող նախկին Դաշնակցութեան «կեդրոնական» կազմակերպութեան մտրակը դեռ կը ցաւեցնէ Դաշնակցականներու հակացող մասի կողմէն... Մենք խիստ տուժեցինք այդ «կեդրոններէն»... մէկ ուսի, շատ ու շատ շնորհակալ ենք ձեր Միութենէն, եթէ դուք, Պ. Պ. Արքիարեանք, մեզ Միութիւն կ'առաջարկէք մեր գլխուն մի նոր կեդրոն դնելու համար, որքան կը լինի այդ կեդրոնի մեծութիւնը, բըռ-

նապետական չափով, թէ սահմանադրական—այդ մեզ համար միեւնոյնն է. մենք ոչ մի կեդրոնի գոյութիւն այլեւս անկարող ենք ընդունիլ... այն ճանապարհը, որով դուք փորձում էք այսօր անցնիլ, մենք արդէն անցել ենք, չնայելով, որ մեր կուսակցութիւնը ձեզմէ ուշ ծնեցաւ:

Արքիարեանք լաւ գիտեն, որ Դաշնակցականները երբեք չեն կրնար հաշտուիլ որ և է կեդրոնի դաշնափառի հետ, լաւ գիտեն որ երբեք չեն հեռանար իրենց ապակեդրոնացումէն, որ իրենց 3-4 տարու մէջ աշխարհն ընդարձակ ու զօրեղ դիրք մը տուաւ: Այդ լաւ գիտեն Արքիարեանք: Ուրեմն ինչո՞ւ կը լռեն մինչ օրս այդ սկզբունքի առթիւ, ինչո՞ւ վճռապէս և որոշ բառերով չեն արտայայտեր իրենց գաղափարը կեդրոնացման և ապակեդրոնացման մասին որ, Միութեան խնդիրն այնուհետեւ դառնայ միայն անմիտ բառ մը:

Եթէ այսօր որ և է Նոր-Հնչակեան մասնաճիւղ ընդունէ ապակեդրոնացման սկզբունքը, առանց սովորատական սահմանափակումներու (որ ոչ մի միտք չեն պարունակեր իրենց մէջ) Դաշնակցական որ և է կազմակերպութիւն կամ կոմիտէ ոչ մի բարոյական իրաւունք չունի այդ մասնաճիւղի անհատներն իր մէջ, եթէ չունեն որոշ դիտողութիւններ որ և է մի կուս համար:

Ըստ իս, երկու կուսակցութեանց Միութեան միակ պայմանը իրնայ ըլլալ Արքիարականաց ապակեդրոնացումը ընդունիլը: Երբ այդ ըսկըցունքը կ'ընդունին Նոր-Հնչակեանները, այն ատեն ամեն մի տեղական Նոր-Հնչակեան մասնաճիւղ կրնայ ազատ կերպով միանալ տեղային Դաշնակցական մարմնոյն հետ:

Այս է Միութեան միակ և միակ ճանապարհը: Իսկ ասոր անունը ձուլում է: Ուրիշ ճանապարհ չկայ. կամ Հնչակեանք են կլանելու մեզ, կամ մենք անոնց: Փորձել ուզել կամ արհեստական կերպով խառնել իրար այդ երկուսը, ըսել է ցանկալ յեղափոխական գործի կործանումը որովհետեւ արդէն ծագելու են կըռիւններ, աւելի վատթար, քան Նազարբէկի և հակառակորդների լկտի կռիւներուն: Իսկ այդպիսի չորձանում մենք չենք ուզեր երբեք, որովհետեւ գործը շատ թանգ է արդէն, Սուրբ և վեհ մեզ համար:

Շատերը կը կարծեն, որ մեր և Արքիարականներու միացման արգելքներէն մինն է նաեւ այնոց մէջ եղած քանի մը արատաւորւած անհատներու խնդիրը: Ո՛չ, այդ արդէն ծիծաղելի է, տահա մը կամ մի քանի անհատներ զրօ են երկու կուսակցութիւններու միացման գործոյն մէջ, եթէ կազմակերպութեան սխալման անոնց ձեռքը չի տար «կապելու և արձակելու» իրաւունքը, ինչպէս երբեմն էին Նազարբէկեանները:

Այդ անհատներու համար շատերը թեր ու գէժ կը խօսին: Ոմանք կատաղի յարձակումներ կ'ընեն, ոմանք նոյն խանութով կը պաշտպանեն զանոնք, Մենք միայն փոքրիկ դիտողութիւն մը կ'ընենք այդ առթիւ:

Իսկապէս երբ բարոյական անհատ մը կ'ըզգայ, որ ինքն այլեւ չի վայելեր ժողովրդի սէրն ու համակրութիւնը, նա պիտի հասկնայ, որ իր ներկայութիւնը յեղափոխական կուսակցութեան մը մէջ ոչ միայն օգտակար չէ, այլ և խիստ վնասաբեր: Եթէ նա յիրաւի բարոյական է, եթէ սուտ են հակառակորդներու ըսածները, նա կը հեռանայ առժամանակեայ կերպով իր կուսակցութենէն, անձամբ կը մտնէ ժողովրդի մէջ, իր սեփական զրկանքներով, գործունէութեամբ ու անձնութեամբ կ'ապացուցանէ ամենքին, որ ինքը այն չէ, ինչ որ կ'ըսեն... այսպէս կ'ընեն բարոյական անաղարտ անհատները... բայց...:

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՄԸ

ԿՈՂՔԸ ՀԱՍՏ

Այլեւս կարող ենք համագումար կերպով ասել, որ ներկայումս գոյութիւն ունեցող մի ողորմելի թիւ «յեղափոխական» կոչւած պարագի ներքին, ահազին քանակութեամբ նախատինքի նիւթ են պատրաստում ազազայ պատմութեան համար: Ռուստի, մի կողմը թողնելով արբանեակներին, երկու ձեռքով ամուր բռնած եախից՝ քաշկրտելով առաջ ենք բերում դրանց պետին՝ «կողքը հաստ»ին:

Լոնտոնում հրատարակող երբեմն յեղափոխական «Հնչակ» անուն

թերթը, յուսահատուած եւրոպական դիւանագիտութիւնից և իր նորաձեւ «տակտիկաներից» ու տաճկահայ ժողովուրդը ազատելու նպատակով (իբր թէ) ձեռք առած միջոցներէ, այժմ դիմել է ամենագործող միջոցներէ՝ հայհոյանքներով... Համադրած լինելով, որ այդպիսով կարող է ամբողջ յեղափոխականներին հեռացնել ասպարէզից և ապա ինքը, իւր մի քանի համախոհ կ'ի ն ա ո ռ ե ռ ո վ' ի հարկէ դարձեալ հայհոյանքներով պիտի յաջողի դուրս վճռուել տաճիկ կառավարութիւնը մինչեւ անգամ Բոսփորի ափերից ու միանգամայն ս օ ց ի ա լ ի ս ա կ ա ն ա խարհի վերածել ամբողջ Տաճկահայաստանը... — Զայլոյթ չպատճառելու համար ընթերցողներին, փակագծի մէջ աւելացնում ենք, որ վերոյիշեալ «Հնչակ» ին թերթ անուն տալով չենք ուզում ասել իբրեւ լրագրի, այլ իբրեւ թղթի չորս թերթ, որոնք լինեն իրեն — գրողին վայել — փողոցային լուսանքներով: Իսկ չփութութեան առիթ չտալու համար, աւելորդ չենք համարում յիշել վերոյիշեալ պ ե տ ի անունը, որը և թերթի տէրն է: Ընթերցողը կը կարծէ թէ մի նոր անուն պիտի լսէ: Բայց ոչ, նոյն Աւետիս Նազարեցիկեանցն է, որին շատ շատերն են ճանաչում: Այդ մարդը, բաւական չէ որ Պարսկաստանի Ղարաբաղ կոչուած գաւառիցն է, որոնք յայտնի են իրենց կողքը հաստութեամբ, այլ և իր ուսումը աւարտել է Պետերպոլիի և ժընէվի համալսարաններէ կ ա մ ա կ ո ռ ո լ թ ե ա ն և հ ա յ հ ո յ ա ն ք ն ե ռ ի ճիւղում: Թէև մանուկ հասակումն է թողել իւր հայրենիքը, սակայն չը պէտք է մոռնալ յայտնի գիտական Դ ար վ ի ն ի ապացոյցները՝ ժառանգական յատկութիւններէ մասին:

Այժմ անցնինք դէպի իրողութիւնը:

Շատերի ձեռքը անցած կը լինի ներկայ տարուս սեպտ. 26ից լոյս տեսած «Հնչակ» ի երկու համարները, Թ. 18 և 19, որոնց ընթերցողները, անշուշտ, կարգաւորւց յետոյ զգաւաքով նետել են մի կողմը... Արդեօք յանցանք է այդ մարդուն ց ն ո ռ ա մ ծ ա ն ու ա ն ե լ վերջապէս, ցնորւածին խո պոչեր չի ունենալ: Այդ մարդը այսօր յարձակուած է այնպիսի անհատներէ վերայ, որոնք Հնչակեան կուսակցութեան յեղափոխական դրո-

շակը, որ մի ժամանակ իբրեւ փալաս ինկած էր Աթէնքում մի սենեակի անկիւնում՝ պարզեցին Սասունի հրապարտ լեռների վերայ. և ապա անթիւ հերոսների արեան մէջ թաթախելով սուլթանի մայր Զատաքում՝ փողփողեցին Զէյթունի ա ճ եղ թ դ ա թ թ ի ն հնչեցնելով ապստամբութեան փողը շարունակ չորս ամիս՝ ի սարսափ ամբողջ եւրոպային և տաճիկ կառավարութեանը. և այդ միեւնոյն անհատներին էր, որ այնքան գովեստներ կը շուայէր և կը փառաբանէր. և որ Հնչակեան կուսակցութիւնը իւր ինը ամեայ գոյութիւնը կ'պարտի այդ անհատներին՝ անհրաժեշտ է: Բայց ի՞նչ ստորութիւն... այսօր իւր այդ փառաբանած հերոսներին «մերութաններ, դաւաճաններ» և ին. և ին. ածականներով կ'մկրտէ, որով մենք դալիս ենք այս եղբակացութեան. — որ ինչպէս սկզբում հայ ժողովուրդը հըս հնազանդ էր տաճիկ կառավարութեան, — նա չէր հալածուած և կոտորուած. բայց հէնց որ հայ ժողովուրդը վարժեց և տեսաւ սուլթանների բռնած ստոր, կործանիչ ընթացքը ու սկսեց բողբոջել անարդարութեան դէմ, պահանջելով իւր իրաւունքները, այն ժամանակից ի վեր սկսեց տաճիկ կառավարութիւնը հալածել բոլոր յեղափոխականներին և ամեն ճիգ թափեց մեռցնելու հայ ժողովրդի մէջ պատմականօրէն արմատացած ազատութեան ոգին... Բայց յաջողեց... սրտ պատասխանը թողնում ենք իրեն կ ա մ ա կ ո ռ ի ն, որովհետեւ ինքն էլ այսօր վիճակակից է նրա սուլթանին: —

Իսկ մենք, յայտնելով մեր բուն համակրանքը բոլոր երկու կողմի հալածւածներին՝ ի սրտէ կ'բարեմաղթենք զրանց «Միութիւն», որով հալածողներին մէկը՝ «կողքը հաստ», կատաղութեանց և յուսահատութեանից պիտի ճայթէ՝ իսկ միւսը, մեր դարաւոր թշնամին պիտի ընկնէ միացած ոյժերի հարուածների տակ՝ և ծագէ՝ ԱԶԱՏԱԻԹԵԱՆ ԱՐՇԱՆՈՅԱԼ:

ԿԵՑՑԷ՛ ՄԻՈՒԹԻՆԸ:
Բագու ԿՈՎՆԱՍՏԻ

ՄԻՈՒԹԻՆԸ ԿԸ ՓՐԿԷ

Մեր սաացած պատասխանները, «Միութիւն» հարցի մասին:

ՆՍՄԱԿ ՍԼԻՎԷՆԷՆ

Միութեան հարցը այսօր մեծ կարեւորութիւն մը ունի, իր պէտքը զգալի է... ուչ միացինք ըսելով՝ ձեռքնիտալ պէտք չէ մնալ, այլ ոգի ի բռին Միութեամբ ախատելու ասպարէզը բաց է. Հայրենիքը կոչում կ'ընէ կուսակցութիւններու և յեղափոխականներու Միութեան: Հնչակեան պայթակղութիւնը, յուզումներ և վէճեր առաջ բերաւ. ժողովուրդը տարբեր սկսաւ խորհիլ յեղափոխութեան վրայ և Միութեան դիմեց, սակայն կուսակցական քանի մը անհատներ, եռասիրութենէ, գժուծ հակաակութենէ մղեալ, սրտերը յուզելէ ետ չեն կենար:

Ազգին ուժերը մաս առ մաս բաժանուելուն մէջ ի՞նչ օգուտ կը տեսնեն ցածոգի անհատները, իրենց անձնական հակաակութիւնները ինչո՞ւ ընդհանրութեան շահերուն հետ կը շփոթեն:

Միութեան խնդրին համար Բարիդի մէջ գումարուած Հայկական Գօմիթէին հրաւերը, անհունս ուրախութիւն պատճառեց ժողովրդին: Ժողովուրդը Միութիւն կ'ուզէ, Միութիւնով միայն նպատակի հասնիլ կարելի է, կուսակցութիւնները և յեղափոխական գործիչները պարտին անմիջապէս ի մի ձուլուիլ, պատրաստելով մի ընդհ. ծրագիր, գործեն մէկ դրօշի տակ, մէկ բանակով, երբ Հայրենիքն իսկ մէկ է: Պէտք է վերցնել կուսակցային անուններ և մըկրտուիլ ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՄԱՆՆԵՐ ԿՐՈՆԱԿԱՆ ՄԻՍՅԵՆԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ անունով, մենք չպէտք է որ անունի համար ախատինք, վերցնենք «ես պիտի ընեմ» զազափարը մեր մէջէն:

Ո՛վ յեղափոխականներ, գովելի և պաշտելի պիտի լինիք այն ատեն միայն, երբ ձեր միացեալ ուժին տակ ձգէք մեր արիւնարբու թշնամին, բաւական է թափուած արիւնները և անթիւ աւերումները: Այժմ Ազգին ուժերը երեք բաժնուած, աղետալի ապագայ մը կը պատկերանայ առջեւինս, մին «Իաշնակցական» միւսը «Հնչակեան» և մի ուրիշը «Նազարեկ-Հնչակեան»: Կը հարցնենք թէ՛ ասանց ո՞րը Ազգին փափաքած ուղղութեամբը պիտի ընթանայ, ժողովուրդը ապշած յուսահատած, ատենց ո՞րին վտաւհի, ո՞րը իրեն վարիչ առաջնորդը ճանչնայ: Եթէ դուք մը-

նաք խուլ ու անտարբեր Միութեան ձայնին, ձեր այդ «Իբրեւակ»ով, «Հին-չափ»ով, «Ապտակ»ով կտոմ ալլով, ինչ պիտի կրնաք ընել: Ժողովուրդը դեռ կը յուսայ և կը սպասէ որ Միութիւնը կրապործուի, իսկ երբ հակառակը պատահի և ժողովուրդը տեսնէ գործիչներու սոսկալի անտարբերութիւնը, միթէ չպիտի անհամարձէ և լքանէ զանոնք: Պատմութիւնը իբր կենդանի վիպ, ցոյց կուտայ անմիաբանութեան պատճառած աղէտները դէպ ի Հայրենիքի փրկութիւնը: Մեր գաղան թշնամին, իր կործանած, դրութեան մէջ անխնայ ջարդեց մեզի, առանց հարցնելու Դաշնակցականը կամ Հնչակեանը, այլ նա իր ուժերով աշխատեցաւ իսպառ ջնջելու հայ տարրը: Միութիւնը պիտի ամրապնդէ մեր ջլատուած ուժերը, ճամարտապէս համոզուած ենք որ առանձին գործել ուղղութիւնը իրենց չուանք ներկելու միայն կ'աշխատին:

Հայրենիքի սէրը և ազատութեան փափագը Միութիւնի շուրջ կ'ընդհարուին:

Խ. Յ. Թ.

ՆԱՄՍԿ ՎԱՌՆԱՅԷՆ

Մինչդեռ Դաշնակցականները ժամանակ մը կը փափաքէին միանալ Հնչակեաններին հետ, որով կրաբիլ ըլլար համերաշխ գործունէութեամբ պաշտպանել և յառաջ վարել Ազգի՜ն Դատը, սակայն այդ փափագը և եղած ջանքերը ապարդիւն մնալով՝ Միութեան խնդիրը ջուրը ինկաւ:— Ինչո՞ւ:— Որովհետեւ Նազարբէկեան իր ետով ու բռնապետական ուղղութիւնով անհամարձեց այս Միութիւնը Դաշնակցականներուն սա պէս պատասխանելով. «Եկէ՛ք մեր դրօշակին տակ մտէ՛ք. իսկ եթէ չէք ուղեր, ասպարէզը բաց է ամեն գործողի համար» և որովհետեւ Նազարբէկեանի հաշիւներուն չէր գար միանալ: Անցեալին մէջ, առանձին առանձին գործելով մեր կուսակցութիւնները ինչ կարող եղան ընել պատահած աղէտներու պատասխանատուն ո՞վ է: Մէկ կողմ ձգենք քննադատութիւնները, անմիաբանութեան մեղ տուած դասը չենք կրնար մոռնալ: Իսկ այժմ, Դաշնակցականները տեսնելով Հնչակեաններու ներքին

վեճերը և ուժերու պառակտումը, կը պատասխանեն Հնչ. միւս կողմիցնէրու. «Թողէ՛ք ձեր այդ Հնչակեան անունը, եկէ՛ք մեր դրօշակին տակ»: Դաշնակցական ընկերները Նազարբէկէն օրինակ առին և անոր պաշտօններուն հետեւելով կ'ուզէն լոկ անունի համար գործել: Պէ՛տք է հասարկութեան և անուան համար զոհել Ազգին ապագան, թող ինքամուտ լինին Դաշնակցականները որ ձեռք ձեռքի տան ու Միութեամբ լուծեն մեր վրէժը Մեծ Ոճրագործէն. քանզի ներքին անհամաձայնութիւններն և բաժանեալ ուժերն են որ կը նպաստեն թշնամոյն յաջողութեանը: Մեծ պատասխանատուութեան տակ կ'ընեն Միութեան հակառակողները և ժողովուրդը իրաւունք ունի այնպիսիները սխալմով թշնամի նկատել և վրէժ լուծել: Հերիք է կուսակցական անուան և կեղտոտ չափանդութիւններու հետեւէն վազել:

Մեր համակրութիւն և յարգանքը նուիրելով՝ այն ամեն ճամարիտ ու անկեղծ գործիչներուն, որ Միութիւնով պիտի սկսին գործել, դարմանելու համար անմիութեան պատճառած աղէտները:

ԱՆԿՅՈՒ ԱՆՄԻՌՈՒԹԻՒՆ

ԿԵՅՅԷ՛ ՄԻՌՈՒԹԻՒՆ

Յ. ՄԱՄԻԿԱՆԵԱՆ

ՆԱՄՍԿ ՍԼԻՎԷՆԷՆ

Միութեան ջերմ համակիր ենք՝ կը փափաքինք համերաշխ գործունէութեան, հակառակ պարագային բացարձակ ձուլում՝ մը:

Միջոցներու մասին, նախ «Միութիւն»ի միջոցաւ Հայ հասարակութիւնը և ամեն Միութեան ցանկացողները իրենց ձայնը բարձրացնեն, այն ատեն բնականաբար բռնաբար լիազօր ներկայացուցիչներ ընտրուին վստահելի և փորձառու անձերէ, որոնք կարող լինին Երփուտը բռնակցութիւններ կատարել, և ընտրել Գործող մարմինը, ո՛չ նախորդ յեղափոխականներու քմածին ծրագրով և ո՛չ ալ ըստ զիպոյց գործելով:

Ա. Դ.

ՍԼԻՎԷՆԻ ՀԱՅ ՊԱՂԹԱԿԱՆՔ

Սլիվէնի (Պուլկարիա) մեր թղթակիցը կը գրէ հետեւեալը.

Մինչև յունուար Սլիվէն հասած են 64 հայ գաղթականներ, որոնք կը խնամուին նպաստամատոյց յանձնախմբէ մը: Գաղթականները տեղադրուած են բաւական կանոնաւոր տեղեր, արհեստաւորները քիչ շատ աշխատելու գործ գտած են. իսկ անկարողները կը խնամուին նըպաստամատոյց յանձնաժողովէն: Ամբիկայի բժիշկ Տ. Քլարքի յանձնարարութիւնով, Տկն. Ալէն գաղթականներուն բաւականի օդնութիւններ ըրաւ, անոնց բաշխելով անկողին, հաղուտ, գուլպա, ալիւր և ածուխ: Ընելէ թէ Սլիվէնի մեր գաղթականները միջին դիրք մը ունին, որն որ մի քիչ միտթարական է:

«ՄԻՌՈՒԹԻՒՆ»Ի ՅԱՅԷԼՈՒԱԾԸ

Մեր նորահաստատ տպարանը՝ իր տառերը ըստ բաւականի կանոնաւորած լինելով՝ այս անգամ «Յաւելուած»ը տպագրութեամբ պիտի հրատարակենք: Եթէ հաճին մեր Պատ. ընթերցողները քաջաւերել մեզ իրենց օժանդակութիւններով, պիտի կըրնանք մօտ ատենի մէջ «Յաւելուածը» երկաբաթաթերթի վերածել:

ԿԱՐԵՐՈՐ ԱԶԴ

Պ. Որդիք Փափագեան՝ Սարեհարցի 28 տարեկան երիտասարդը որ Կ. Պոլսէն մեկնած էր անյայտ մնացած է մինչև այսօր: Իր մայրը Տիկին Էլպիս Փափագեան և քոյրը Օրիորդ Փայլակ Փափագեան, որոնք Փաշիքէ կը գտնուին, հրապարակաւ կը խնդրեն որ այս մասին տեղեկութիւն մը ունեցողը ծանօթութիւն տայ Գաշիքէի Հայոց Առաջնորդարանին, որով սփոփած պիտի ըլլայ ծեր մօր մը կըրնելի՞ք որ ամիսներէ ի վեր անստուգութեան մատնուած կուլայ իր զաւակը:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԷ «ՄԻՌՈՒԹԻՒՆ»Ի

ԱՐՏՅՆԱՏԷՐ Ա. ԳՕԳՔԻՆՈՄ